Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 03

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի արտահերթ նիստի

ք. Երևան 26 մարտի 2024թ.

Ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով Կառավարման խորհրդի 2021 թվականի ապրիլի 2-ի թիվ 05-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 7-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերը և 19-րդ կետը՝ կայացել է Կառավարման խորհրդի արտահերթ նիստ՝ հեռակա քվեարկության միջոցով:

Համաձայն Կառավարման խորհրդի 2021 թվականի ապրիլի 2-ի N 05-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 21-րդ կետի՝ Կառավարման խորհրդի նիստերն իրավազոր են, եթե այդ նիստերին մասնակցում է խորհրդի անդամների 2/3-ից ավելին:

Մասնակցում են՝

Հակոբ Սիմիդյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)
Գնել Սանոսյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Արմեն Դանիելյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի պարտականությունները կատարող
Աշխեն Շիրվանյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Արմենուհի Հարությունյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Արման Պողոսյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Բարդուխ Գաբրիելյան	Գիտությունների ազգային ակադեմիայի կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի ձկնաբանության լաբորատորիայի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Շահեն Խաչատրյան	Հայաստանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոնի վարիչ, երկրաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Յուրիկ Հակոբյան	Հայաստանի երկրաբանների միություն ՀԿ
Սուրեն Մելիքյան	Մանթաշյանց գործարարների միություն

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2024 թվականի գնումների պլանում փոփոխություն կատարելուն համաձայնություն տալու մասին,
2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի հաստիքացուցակում փոփոխություն կատարելուն հավանություն տալու վերաբերյալ:

Կառավարման խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2024 թվականի գնումների պլանում փոփոխություն կատարելուն:

Կողմ 10, Դեմ 0

2. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի հաստիքացուցակում փոփոխություն կատարելուն:

Կողմ 9, Դեմ 1

Կառավարման խորհրդի դիտարկումները.

Կառավարման խորհրդի անդամ, ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Արման Պողոսյանի կողմից օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ ներկայացվել է հետրյալ դիտարկումը.

«Համաձայն ներկայացված հիմնավորման՝ տեսչական մարմնի հաստիքացուցակի փոփոխությանը հավանություն տալու դեպքում պետական բյուջեում էական ավելացման կամ նվազեցման անհրաժեշտություն չի առաջանում: Նախագծին կից փոփոխված հաստիքացուցակում, սակայն, ներկայացվել է միայն հաստիքային միավորների քանակը՝ առանց սահմանվող պաշտոնային դրույքաչափերի: Արդյունքում պարզ չէ՝ դա կհանգեցնի

աշխատավարձի ֆոնդի փոփոխության, թե ոչ: Հետևաբար, օրակարգի 2-րդ հարցին քվեարկում եմ կողմ՝ պայմանով, որ այն չի հանգեցնի աշխատավարձի ֆոնդի փոփոխության»:

Քվեարկությամբ որոշումն ընդունվել է ձայների պարզ մեծամասնությամբ:

ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ) _____ Հ. Սիմիդյան

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության
վարչության պետ
(խորհրդի քարտուղար) _____ Վ. Բարսեղյան